ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/294 «25» 09 2025 թ.

«Արմտեքստիլ» ՍՊԸ
(ՀՎՀՀ 00498117)
ՀՀ Ք. Երևան, Ե.Թադևոսյան 5շ, բն.34
էլ. հասցե՝ armtextile77@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և «Արմտեքստիլ» ՍՊ ընկերության միջև 26.06.2025թ.-ին կնքված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Է-47 ծածկագրով պայմանագրի և 04.08.2025թ.-ի թիվ 1 համաձայնագրի շրջանակներում «Արմտեքստիլ» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր 9 888 000 ՀՀ դրամի թվով 1000 հատ ձեռնաշղթաներ:

Պայմանագրի 1.1 կետով սահմանված ժամկետում 2025թ.-ին սեպտեմբերի 4-ին «Արմտեքստիլ» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր նախատեսված ապրանքները՝ պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումը սկսվում էր պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում, իսկ համաձայնագրով ապրանքների մատակարարման ժամկետները երկարաձգվել էին երեսուն օրացուցային օրով, սակայն մատակարարի կողմից ներկայացված նմուշը չի հաստատվել գնահատող հանձնաժողովի կողմից, քանի որ չի համապատասխանել պայմանագրով նշված ապրանքի տեխնիկական բնութագրին:

Համաձայն «Արմտեքստիլ» ՍՊԸ-ի կողմից 22.09.2025թ.-ին ներկայացված թիվ ՄԳ/313149-25 գրության և ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից:

Պատվիրատուի կողմից առ 22.09.2025թ. հաշվարկվել է յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար 0.05%-ի չափով տույժ՝ 54 384 և 0.5%-ի չափով տուգանք՝ 49 440 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և «Արմտեքստիլ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Է-47 ծածկագրով պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

«Արմտեքստիլ» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր սահմանված տույժը և տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար 1 875 000 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման գումար 1 250 000 ՀՀ դրամ փոխանցել ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N900008000664 և N900008000698 հաշվեհամարներին: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «Արմտեքստիլ» ՍՊԸ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

<< 25>> 09 2025թ.

ք.Երևան

Կատարող՝ Է. Մնացականյան
Հեռ. 010-59-64-86